Վրաց ներկայացուցիչը շարունակեց պնդել իր տեսակէտի վրա, իսկ այդ միջոցին Վրաստանի կառավարութիւնը, օգտուելով թիւրքերի հեռանալուց, հակառակ Հայաստանի կառավարութեան կտրուկ բողոքների, գրաւեց Ախալքալաքի գաւառը. դեկտ. 5-ին վրաց զօրքերը, զօր. Մակայևի գլխաւորութեամբ, մտան Ախալքալաք և յայտարարեցին միացած Վրաստանին: Վրաց կառավարութիւնը պատասխանեց Հայաստանի կառավարութեան, թէ՝ «Ախալքալաքի գաւառի նուաճման հարցը ո՛չ պատմական, ո՛չ քաղաքական և ոչ էլ բարոյական տեսակէտից վիճելի չէ»: Եւ այդ «անվիճելի» իրաւունքը իրականացնելու համար դեկտ. 8 ու 9-ին, վրաց զօրքերը զէնքի ուժով ստիպեցին սակաւամարդ հայ զօրամասին թողնել Ախալքալաքի գաւառի Եֆրեմովկա և Տրոյիցկոյէ գիւղերը, որ հայերը գրաւել էին թիւրքերի հեռանալուց յետոյ:

Ախալքալաքի ու Լոռիի դէպքերը մեծ յուզում առաջ բերին Երևանում: Կուսակցութիւնները, Հայաստանի Խորհուրդը, կառավարութիւնը, հանրային կարծիքը միաբերան դատապարտում էին վրացիների ընթացքը: Հայ. Խորհուրդը մի շարք դոնփակ նիստերում քննելով դրութիւնը՝ կառավարութեան տուեց գործելու ազատութիւն՝ պարտաւորեցնելով նրան դիմել ամէն միջոցի՝ պաշտպանելու համար Հայաստանի իրաւունքը Ախալքալաքի, բայց, մանաւանդ, Լոռիի վերաբերմամբ: Այս հարցում տարակարծութիւն չկար. բոլոր կուսակցութիւնները Լոռին համարում էին Հայաստանի անբաժանելի մաս: Հայ ժողովրդի բոլոր խաւերի դաղափարն էր արտայայտում, երբ սահմանավէճի առթիւ պատմաբան Լէօն դրում էր. «Երկու հազար տարուայ պատմութիւնը տանում հասցնում է այն եզրակացութեան, որ առանց Լոռու երկար դարաշրջաններում չէր կարելի երևակայել Հայաստան: Ներկայումս այս բանն աւելի ևս աներևակայելի պիտի համարել, քանի որ կտրել Լոռին Հայաստանի մարմնից կը նշանակէ յօշոտել նրա ամբողջ անցեալը և նրա կուլտուրական դանձերը — դարերի և հարիւրաւոր սերունդների մեծագործութիւնը թալանի տալ»*):

Ծերեթելիի համար Լոռին «ռազմագիտական սահման» էր, հայերի համար՝ հայկական մարմնի մի մաս: Եւ այդ մարմինն էր, որ յօշոտւում էր չարաչար վրաց զօրախմբերի կողմից: Դեկտ. 9-ին և ապա 12-ին Հայաստանի կառավարութիւնը նորից դիմեց վրաց կառավարութեան՝ խնդրելով, յանուն երկու ժողովուրդների բարիքի, վերջ տալ հարստահարութիւններին, դուրս բերել վրաց զօրքերը Լոռիից և սահմանի խնդիրը կարգադրել խաղաղ բանակցութիւններով: «Մերժման պարագային, գրում էր Քաջազնունին իր դեկտ. 12 դիմումնագրի մէջ, Հայաստանի կառավարութիւնը ստիպուած պիտի լինի ձեռք առնել անհրաժեշտ միջոցներ՝ պաշտպանելու համար Հայաստանի քաղաքացիներին վրաց զօրքերի բռնութիւններից ու չահատակութիւններից»:

Վրաց կառավարութեան պատասխանը եղաւ բացասական. Թիֆլիսի կառավարութիւնը շարունակում էր պնդել իր «անվիճելի» իրաւունքների վրա, առանց հաշուի առնելու հայերի նոյնպէս «անվիճելի» համարուող իրա-

*) Լէօ, «Սահմանավէճեր», 1919թ., Թիֆլիս, էջ 24.